Հավելված
ՀՀ կառավարության 2003 թվականի
դեկտեմբերի 11-ի N 1673-Ն որոշման

2004 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐ
ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ

I. ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2004 թվականի ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) մշակման և իրականացման հիմքը 2000 թվականի դեկտեմբերի 5-ի «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն է:

Ծրագրի մշակման համար հիմք են հանդիսացել նաև՝

ա) 2003 թվականի հունիսին Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի կողմից ընդունված Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագիրը,

բ) Հայաստանում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման քաղաքականության և ռազմավարության հիմնադրույթները (Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի օգոստոսի 3-ի նիստի N32 արձանագրության 3-րդ կետ),

գ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N2141-Ն որոշումը,

դ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 19-ի N2172-Ն որոշմամբ հաստատված՝ Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2003 թվականի ծրագիրը,

ե) Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 8-ի N994-Ն որոշմամբ հաստատված Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը:

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակները և խնդիրներն են՝

ա) փոքր և միջին ձեռնարկատիրության (այսուհետ՝ ՓՄՁ) սուբյեկտներին աջակցության համապատասխան ենթակառուցվածքների ստեղծումը և ամրապնդումը,

բ) ՓՄՁ-ի սուբյեկտների ֆինանսական և ներդրումային հնարավորությունների ընդլայնումը,

գ) ՓՄՁ-ի սուբյեկտների արտաքին տնտեսական գործունեության ընդլայնումը,

դ) ՓՄՁ-ի սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցությունը,

ե) ՓՄՁ-ի սուբյեկտների որակի կառավարման միջազգային ստանդարտների ներդրմանն աջակցությունը,

զ) ՓՄՁ-ի սուբյեկտների՝ գործարար տեղեկատվության, խորհրդատվության, ուսուցման ծառայություններից օգտվելու հնարավորությունների ընդլայնումը:

III. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

2004 թվականի համար նախատեսված ծրագրային միջոցառումների համակարգն ընդգրկում է ՓՄՁ-ի ոլորտի զարգացման և պետական աջակցության հետևյալ հիմնական ուղղությունները՝

1. ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցության համապատասխան ենթակառուցվածքների ստեղծում և ամրապնդում

1.1. «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի գործունեության ընդլայնում. դրա մարզային 3 մասնաճյուղերի ստեղծում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Լոռու և Կոտայքի մարզերում

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն հիմնախնդիրներից է Հայաստանի Հանրապետության մարզերի սոցիալ-տնտեսական զարգացումը: Այդ գործում հատկապես կարևորվում է ձեռնարկատիրական գործունեության, մասնավորապես, ՓՄՁ-ի զարգացումը տարածաշրջաններում:

Այդ նպատակով Փոքր և միջին ձեռնարկատիրությանը պետական աջակցության 2003 թվականի ծրագրի շրջանակներում ստեղծվել է «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի (Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ) 3 մասնաճյուղ Հայաստանի Հանրապետության Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզերում, որոնք համակարգում են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացվող ծրագրերը վերոհիշյալ մարզերում:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզի աշխարհագրական դիրքը և առանձնահատկությունները, ինչպես նաև Հայաստանի տնտեսության որոշակի ճյուղերի զարգացման համար առկա պայմանները, ծրագրով նախատեսվում է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի 3 մասնաճյուղ ստեղծել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Լոռու և Կոտայքի մարզերում, ինչը պայմանավորված է այնտեղ ՓՄՁ-ին աջակցության համապատասխան ենթակառուցվածքների բացակայությամբ, ձեռնարկատիրական գործունեության համար անհրաժեշտ ներուժի առկայությամբ:

Այդ մասնաճյուղերի գործունեությունը կնպատակաուղղվի ՓՄՁ-ի զարգացման տարածաշրջանային և մարզային ու համայնքային ծրագրերի իրականացմանը՝ հաշվի առնելով տարածաշրջանային զարգացման գերակայություններն, առանձին բնակավայրերի առանձնահատկությունները և առկա ներուժը:

1.2. Բիզնես ինկուբատորի ստեղծում Գյումրիում

Հայաստանում ՓՄՁ-ի հիմնախնդիրներն առավել սուր են արտահայտված հեռավոր և սահմանամերձ մարզերում, մասնավորապես Շիրակի մարզում, որը ժամանակին հանդիսացել է երկրի խոշոր արդյունաբերական կենտրոններից մեկը: 1988 թվականի ավերիչ երկրաշարժի արդյունքում և շուկայական տնտեսությանն անցման փուլում նկատվեց Հայաստանի տնտեսության, այդ թվում նրա արդյունաբերական արտադրանքի կտրուկ անկում, որն իր ծանր ազդեցությունը թողեց հատկապես Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի վրա:

Դիտարկումները ցույց են տալիս, որ միջազգային պրակտիկայում ձեռնարկատիրության, մասնավորապես, ՓՄՁ պետական աջակցության առավել արդյունավետ և հեռանկարային ուղղություններից է բիզնես ինկուբատորների ստեղծումը, հատկապես տնտեսական զարգացման ցածր մակարդակ ունեցող տարածաշրջաններում:

Բիզնես ինկուբատորները նոր ստեղծվող և զարգացող ՓՄՁ-ի սուբյեկտներին տրամադրում են տարածք և կենտրոնացված գործարար ծառայություններ, շուկայական ենթակառուցվածքներից օգտվելու առավել բարենպաստ պայմաններ և տեխնիկական այլ աջակցություն:

Բիզնես ինկուբատորներում ընդգրկված ՓՄՁ-ի սուբյեկտների համար ստեղծվում են նպաստավոր պայմաններ և միացյալ ուժերով գործելու հնարավորություն, ինչը զգալիորեն հեշտացնում է դրանց կայացումն ու հետագա արդյունավետ գործունեությունը:

Հաշվի առնելով այն, որ սննդամթերք արտադրող և վերամշակող կազմակերպություններն ունեն զարգացման մեծ հեռանկարներ, այդ ուղղվածության *բիզնես ինկուբատորի ստեղծումը Գյումրիում* հնարավորություն կտա սննդամթերքի արտադրության (վերամշակման) և սպառման արդյունավետ կազմակերպման շնորհիվ մեղմացնել ինչպես Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի, այնպես էլ այն ընդգրկող տարածաշրջանի պարենային ապահովվածության հիմնախնդիրը:

Գործարար աջակցության նման մեխանիզմի կիրառմանը կարող են օժանդակել տեղական ինքնակառավարման մարմինները՝ տրամադրելով չօգտագործվող տարածքները բիզնես ինկուբատորի ստեղծման համար, դրանով իսկ նպաստելով մարզային և համայնքային ՓՄՁ-ի սուբյեկտների միջև կոոպերացիայի զարգացմանը:

1.3. ՓՄՁ-ի սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցության նպատակով տեխնոպարկի ստեղծում Երևան քաղաքի տարածքում

ՓՄՁ-ի սուբյեկտների տեխնոլոգիական և նորարարական աջակցության ձևերից է *տեխնոպարկը*: Այն գիտական կենտրոնի շուրջ համախմբված նորաստեղծ կազմակերպությունների համախումբ է, որն առաջարկում է ժամանակակից բարձրորակ խորհրդատվություն և տեղեկատվություն՝ ուղղված դրանց տեխնոլոգիական զարգացմանն, արտադրանքի որակի կատարելագործմանն, ինչպես նաև տրամադրում է իրացման շուկաների ուսումնասիրություններ իրականացնելու լայն հնարավորություններ:

Տեխնոպարկերն ավելի հարմար են արդյունաբերական կամ բարձր տեխնոլոգիական ոլորտներում գործող ՓՄՁ-ի սուբյեկտների համար, որտեղ արտադրանքի կամ արտադրական պրոցեսների կատարելագործման համար շատ կարևոր է նոր տեխնոլոգիաների և գիտական նոր մշակումների կիրառումը: Սա փոխշահավետ է ինչպես գիտնականների, այնպես էլ ձեռնարկատերերի համար փորձի և հմտությունների փոխանակման առումով, երբ գիտական ծրագրերը կարող են ներդրվել գործարարության մեջ, իսկ ձեռնարկատերերը կարող են օգտվել գիտական մշակումներից:

Այս մոդելն առավել արդյունավետ կարող է գործել արդյունաբերական և գիտական ներուժ ունեցող խոշոր քաղաքներում, մասնավորապես Երևանում՝ հաշվի առնելով պարապուրդի մատնված արդյունաբերական կազմակերպությունների և հիմնական միջոցների, ինչպես նաև մասնագիտական բարձր մակարդակ ունեցող աշխատուժի առկայությունը: Այս ուղղությամբ անհրաժեշտ է համագործակցել տեղական գիտական և գիտակրթական հաստատությունների (կենտրոնների) հետ:

ՓՄՁ-ի սուբյեկտներում նորարարությունների և նոր տեխնոլոգիաների ներդրումը կնպաստի հայրենական արտադրանքի մրցունակության բարձրացմանը, գիտա-տեխնիկական արդյունքների արդյունավետ օգտագործմանն, արտահանման ներուժի ընդլայնմանը:

2. ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցություն

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը, ընդլայնելով իր գործունեությունը, կշարունակի իրականացնել «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական ու ներդրումային աջակցության շրջանակներում ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխիքների տրամադրման գործառույթը:

ՓՄՁ-ի սուբյեկտների ֆինանսավորման (վարկավորման) հետ կապված հիմնախնդիրները հաղթահարելու, նրանց ֆինանսական ու ներդրումային աջակցություն ցուցաբերելու նպատակով 2004 թվականին կընդլայնվի ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխիքների տրամադրման ծրագիրը: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը ծրագրային այս միջոցառման կատարելագործման աշխատանքներում կներգրավի այս բնագավառում մեծ փորձառություն ունեցող փորձագետների:

ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխիքների տրամադրման ուղղությամբ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ը պայմանագրային հիմունքներով կհամագործակցի ՓՄՁ-ի սուբյեկտների վարկավորման ծրագրեր իրականացնող առևտրային բանկերի հետ:

Վարկային երաշխիքների տրամադրման ծրագրից կարող են օգտվել «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ՓՄՁ-ի սուբյեկտ հանդիսացող առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը: Ծրագրի շրջանակներում նախապատվությունը կտրվի գրավի բացակայության պատճառով մերժվող հայտերին, արտադրության կամ ծառայությունների բնագավառում, ինչպես նաև նոր, ոչ առևտրական գործունեություն ծավալած ՓՄՁ-ի սուբյեկտներին և Երևան քաղաքի տարածքից դուրս գործող ՓՄՁ-ի սուբյեկտներին:

3. ՓՄՁ-ի սուբյեկտներում որակի կառավարման միջազգային ստանդարտների (ԻՍՕ 9000 շարքի) ներդրմանն աջակցություն

Շուկայական տնտեսավարման պայմաններում, հատկապես ՓՄՁ-ի սուբյեկտների համար, ձեռնարկատիրական արդյունավետ գործունեություն ծավալելու հիմնական գրավականը թողարկվող արտադրանքի, մատուցվող ծառայությունների համապատասխանեցումն է միջազգային ստանդարտներին: Մասնավորապես, ներքին շուկայում ամրապնդվելու և արտաքին շուկաներ մուտք գործելու կարևոր նախապայման է որակի կառավարման (ԻՍՕ 9000 շարքի) միջազգային ստանդարտների ներդրումը:

Տնտեսավարող սուբյեկտներում որակի կառավարման համակարգերի ներդրումն էականորեն բարելավում է դրանց կառավարման արդյունավետությունը, ավելի մատչելի է դարձնում տեղեկատվությամբ ապահովումը և, վերջապես, բարձրացնում է տնտեսավարող սուբյեկտների մրցունակությունն ու հեղինակությունը:

Ներկայումս ՓՄՁ-ի սուբյեկտները որակի կառավարման համակարգերի ներդրման հետ կապված տեխնիկական ու ֆինանսական աջակցության կարիք ունեն:

Ելնելով նշված նկատառումներից և Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման գերակայություններից՝ 2004 թվականին ծրագրի շրջանակներում կցուցաբերվի աջակցություն ՓՄՁ-ի սուբյեկտներում որակի կառավարման (ԻՍՕ 9000 շարքի) միջազգային ստանդարտների ներդրմանը, մասնավորապես ԻՍՕ 9000 շարքի որակի կառավարման համակարգի ներդրման ուղղությամբ խորհրդատվական աշխատանքների իրականացման համար կցուցաբերվի աջակցություն, ինչպես նաև կկազմակերպվեն ՓՄՁ-ի սուբյեկտներում ԻՍՕ 9000 շարքի որակի կառավարման միջազգային ստանդարտների ներդրման գործընթացներին նվիրված դասընթացներ/սեմինարներ/, կհրատարակվեն համապատասխան տեղեկատվական նյութեր:

4. ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն

ՓՄՁ-ի սուբյեկտներին *գործարար տեղեկատվությամբ* ապահովումը դրանց արդյունավետ գործունեության հիմնական երաշխիքներից է: ՓՄՁ-ի սուբյեկտներին անհրաժեշտ է ունենալ օպերատիվ տեղեկատվություն ընդհանուր տնտեսական վիճակի (կոնյունկտուրայի), արտաքին և ներքին շուկաներում, օրենսդրական դաշտում կատարվող փոփոխությունների, գիտատեխնիկական առաջընթացի ու բարձր տեխնոլոգիաների կիրառման, պետական գնումների իրականացման ընթացքի և ձեռնարկատիրության ոլորտին առնչվող այլ գործընթացների մասին:

Նման տեղեկատվությունը հիմնականում տարածվում է զանգվածային լրատվության միջոցներով, որը միշտ չէ, որ ամբողջական է, և չի բավարարում գործարարների պահանջները:

Ծրագրով նախատեսվում է տեղեկատվական ու վերլուծական նյութերի և պարբերականի հրատարակում (դրանք կտեղադրվեն նաև Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի ինտերնետային էջում), ինչը համապարփակ գործարար տեղեկատվությամբ կապահովի

Հայաստանի գործարար համայնքին (ՓՄՁ-ի սուբյեկտներ, գործարարությանն աջակցող կառույցներ և ՓՄՁ-ի սուբյեկտների շահերը ներկայացնող այլ կառույցներ):

Ծրագրով նախատեսվում է նաև աջակցություն ցուցաբերել ՓՄՁ-ի սուբյեկտներին՝ ինտերնետային էջերի պատրաստման ուղղությամբ:

ՓՄՁ-ի սուբյեկտների արդյունավետ գործունեության հիմնական երաշխիքներից և կարևոր նախադրյալներից է նաև ՓՄՁ-ի սուբյեկտների համար որակյալ *գործարար խորհրդատվության* ապահովումը: Ծրագրով նախատեսվում է շարունակել պետական աջակցությունը ՓՄՁ-ի սուբյեկտներին՝ խորհրդատվական ծառայությունների մատուցման մատչելիության ապահովման գործում:

ՓՄՁ-ի սուբյեկտներին խորհրդատվական աջակցությունը կիրականացվի մասնագիտացված խորհրդատվական կազմակերպությունների միջոցով ներդրումային և զարգացման ծրագրերի մշակման, շուկայական հետազոտությունների իրականացման, պարբերաբար կազմակերպվող բաց դռների միջոցով գործարար խորհրդատվության տրամադրման (Երևանում և Հայաստանի Հանրապետության մարզերում), պոտենցիալ գործընկերների հայտնաբերման, ինչպես նաև այլ ուղղություններով՝ ըստ ՓՄՁ-ի սուբյեկտների կողմից ներկայացված պահանջների:

Մաքսային բրոքերի ինստիտուտի զարգացման նպատակով մաքսային միջնորդներին (բրոքերներին) և մաքսային միջնորդական ծառայություններ մատուցող ընկերություններին կցուցաբերվի խորհրդատվական աջակցություն մաքսային ընթացակարգային հիմնահարցերի հաղթահարման/լուծման/ և ՓՄՁ-ի սուբյեկտներին մատուցվող մաքսային միջնորդական ծառայությունների որակի բարելավման ուղղությամբ:

5. ՓՄՁ-ի ոլորտի կադրերի մասնագիտական ուսուցում և վերապատրաստում

Որպես տեխնիկական բնույթի առաջնահերթ հիմնախնդիր կարելի է առանձնացնել գործարարների համապատասխան գիտելիքների, ֆինանսական, հաշվապահական հաշվետվությունները գրագետ կազմելու և գործարար ծրագրեր մշակելու ունակությունների պակասը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը թերի տիրապետելը և այլն:

ՓՄՁ-ի սուբյեկտների աշխատակիցների գործարար հմտությունների զարգացման և մասնագիտական վերապատրաստման նպատակով կապահովվի նրանց մասնակցությունն ուսուցողական և վերապատրաստման դասընթացներին: Դրա հետ մեկտեղ մաքսային բրոքերի ինստիտուտի զարգացման նպատակով պարբերաբար կկազմակերպվեն մասնագիտական ուսուցման և վերապատրաստման դասընթացներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՓՄՁ-ի սուբյեկտներին մեծամասամբ հասանելի չեն գործարար ծառայությունները՝ հիմնականում դրանց թանկության պատճառով, ծրագրի շրջանակներում նախատեսվում է աջակցություն ցուցաբերել նրանց մասնակցությանն այդ դասընթացներին՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն վճարելով դասընթացների արժեքը:

Նման դասընթացներին մասնակցությունը հնարավորություն կընձեռի սկսնակ գործարարներին ծանոթանալու ձեռնարկատիրական գործունեության հիմունքներին, իսկ գործող ՓՄՁ-ի սուբյեկտների աշխատակիցներին՝ ստանալու պարզաբանումներ գործող հարկային և մաքսային համակարգերի, հաշվապահական (ֆինանսական) հաշվետվությունների ու գործարար ծրագրերի կազմման ուղղությամբ, ինչպես նաև ձեռք բերելու համապատասխան մասնագիտական գիտելիքներ կառավարման, շուկայավարման, գործարար էթիկայի և այլ բնագավառներում:

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Ծրագիրն իրականացվում է Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի և սույն ծրագրով նախատեսված ՓՄՁ-ի ոլորտին աջակցող այլ կառույցների միջոցով:

2. Համաձայն «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ ՓՄՁ-ի պետական աջակցության տարեկան ծրագրերի ֆինանսավորումն, որն արտացոլվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում առանձին տողով, կատարվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

3. Ծրագրի իրականացման միջոցառումների ցանկը՝ համաձայն հավելվածի, մշակում է Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարությունը՝ Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի հետ համատեղ, որը հաստատվում է վերջինիս Հոգաբարձուների խորհրդի կողմից:

4. Ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացվում են Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից սահմանված մրցույթների անցկացման կարգով:

5. Միջազգային դոնոր կազմակերպությունների հետ փոխհամաձայնությունների շրջանակներում 2004 թվականին կիրականացվեն ՓՄՁ-ի ոլորտի զարգացման համատեղ ծրագրեր (համաֆինանսավորման սկզբունքով)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ՆԱԽԱՐԱՐ **Մ. ԹՈՓՈՒԶՅԱՆ**

Հավելված
փոքր և միջին ձեռնարկատիրությանը
պետական աջակցության 2004 թվականի ծրագրի

Ց Ա Ն Կ
ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառումը	Կատարողը	Կատարման ժամկետը
1.	«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի գործունեության ընդլայնում. դրա մարզային 3 մասնաճյուղերի ստեղծում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Լոռու և Կոտայքի մարզերում	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ	2004 թվականի ընթացքում
2.	Որպես ՓՄՁ-ի սուբյեկտներին աջակցող այլ ենթակառույցներ՝ բիզնես ինկուբատորի ստեղծում Գյումրիում	Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ	2004 թվականի 3-րդ եռամսյակ
3.	ՓՄՁ-ի սուբյեկտներում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմանն աջակցության նպատակով Երևանում տեխնոպարկի ստեղծում	Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ, Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարություններ	2004 թվականի 4-րդ եռամսյակ
4.	ՓՄՁ-ի սուբյեկտներին ֆինանսական և ներդրումային աջակցության նպատակով ՓՄՁ-ի սուբյեկտներին վարկային երաշխիքների տրամադրման ծրագրի շարունակում և ընդլայնում	Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ, Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարություններ	Սկսած 2004 թվականի 1-ին եռամսյակից
5.	ՓՄՁ-ի սուբյեկտներում որակի կառավարման միջազգային ստանդարտների (ԻՍՕ 9000 շարքի) ներդրմանն աջակցություն	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ	Սկսած 2004 թվականի 1-ին եռամսյակից
6.	ՓՄՁ-ի սուբյեկտներին գործարար տեղեկատվական և խորհրդատվական աջակցություն	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ	Սկսած 2004 թվականի 1-ին եռամսյակից
7.	ՓՄՁ-ի ոլորտի կադրերի մասնագիտական ուսուցման և վերապատրաստման դասընթացների կազմակերպում՝ ինչպես ՓՄՁ-ի սուբյեկտների, այնպես էլ ուսուցողական ծառայություններ մատուցող կազմակերպությունների համար	Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ	Սկսած 2004 թվականի 1-ին եռամսյակից
8.	Միջազգային դոնոր կազմակերպությունների հետ ՓՄՁ-ի ոլորտի զարգացման համատեղ (համաֆինանսավորման սկզբունքով) ծրագրերի մշակում և իրականացում	Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարություն, Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ, Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարություններ	2004 թվականի ընթացքում